ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆՆԱ ՋՈՒՎԱՆՈՎԱՅԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.4-րդ կետի, 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի և 19.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով փաստաբան Աննա Ջուվանովայի (արտոնագիր թիվ 550) 22.07.2015թ. դիմումը,

նկատի ունենալով, որ դիմումին կից Աննա Ջուվանովան ներկայացրել է իրեն մակագրված թիվ 15082 կարգապահական գործը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Դադարեցնել կարգապահական գործ նախապատրաստող անձ՝ փաստաբան Աննա Ջուվանովայի (արտոնագիր թիվ 550) լիազորությունները:***

2. ***Աննա Ջուվանովայի լիազորությունների դադարման մնացած ժամկետով կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան ներգրավվելու համար դիմել վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած թեկնածուին՝ վերջինիս գրավոր համաձայնությունը ստանալու նպատակով:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 **հուլիսի 2015թ.**
թիվ 289-Ա
ք.Երևան